«ԱԶԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1820—1920 թթ.)», Տեխստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագրությունները գրեցին Ալմաստ Զաքարյանը, Կարրի Հովհաննիսյանը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 595 էջ։

Իր տեսակի մեջ եզակի այս աշխատությունն ընթերցողին է ներկայացնում հայ հրապարակախոսական մտքի մեկդարյա պատմության այն հիշարժան էջերը, որոնք արծարծում են մեր ժողովրդի ազատասիրական ձգտումները և ազատագրական ոգորումները։

Ժողովածուն բացվում է ծավալուն մի առաջաբանով, որի հեղինակները նյութի անբասիր իմացությամբ ստեղծել են քննվող ժամանակաշրջանի հայ հրապարակախոսության պատմության ուրույն տեսությունը։ XIX դ. բուռն իրադարձությունների բովում ձևավորված հայ ազատասիրական մտքի գաղափարական ակունքները հեղինակներն ամենայն իրավամբ կապում են նախորդ դարերի հայկական ազատագրական շարժումների և ազատասիրական մտքի ավանդույթների հետ։ Ինչ վերաբերում է XIX դ. հայ հասարակական մտքի ընորոշ կողմերին, ապա այդ ժամանակաշրջանի առանձնահատկությունը բնութագրվում է «...Անդրկովկասի ժողովուրդների ազատասիրական ընդհանուր կողմնորոշումով դեպի Ռուսաստան» (էջ 6)։

Առաջաբանի հեղինակներն առանձնակի ուշադրություն են նվիրում քննվող ժամանակաշրջանի հրապարակախոսական հոդվածների արտահայտչաձևերի հարստության և դրանց դեմոկրատական նպատակասլացության հարցերին։ Այսպես, հանգամանորեն վերլուծելով Խաչատուր Աբովյանի «ազատասիրական հավատամքը», նրանք հանգում են այն հետևության, որ «Աբովյանի ստեղծագործության, կյանքի և գործունեության հայտնի և անհայտ բոլոր խորհուրդների միջուկում գործում է այս հավատամքը» (էջ 7)։ XIX դ. 60-ական թվականների ժամանակաշրջանը բնութագրվում է հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի գործունեությամբ՝ հանձինս Միքայել Նալբանդյանի և նրա հայ դինակիցների։ Հեղինակները վեր են հանում Նալբանդյանի դերը՝ հայության երկու հատվածների մերձեցման, արևմտահայ իրականության մեջ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի ստեղծման և դրա գործունեության աշխուժացման, առհասարակ հայ ազգի ազատագրության ու նրա միասնության գաղափարի արծարծման գործում։ Խոսելով դարաշրջանի թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գործիչների, հրապարակախոսների, գրողների ստեղծագործության առաջադիմական-ազատագրական ուղղվածության հարցի մասին, հեղինակներն ընդգծում են. «...հայ հասարակական մտքի առաջավոր բոլոր ներկայացուցիչները, այս կամ այն սահմանափակությամբ հանդերձ, առաջադիմության, ազատության հարցերը առաջադրում-լուծում էին համամարդկային չափանիշներով, հարազատ ժողովրդի ճակատագրի ամենածանր պահերին անգամ չնահանջելով համամարդկայնության բարձր դիրքերից» (էջ 15)։ Այս առումով հետաքրքրական են հայ հրապարակախոսական մտքի ազատասիրական վերելքի նոր շրջանի, 70-ական թվականների բնութագրումները՝ կապված 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ։ Ամբողջական և խորն է 1894—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակաշրջանի և հայ հրապարակախոսների գործունեության բնութագիրը։ Առաջաբանի հեղինակները պատմական փաստերի հիման վրա նշում են եվրոպական դիվանագիտության անփառունակ դերը Հայկական հարցի ձախողման գործում, ինչպես և վեր հանում հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ եվրոպական և ռուս առաջավոր գործիչների համերաշխության բազմապիսի փաստեր։

Առանձնապես ինքնատիպ է 1905 թ. ռուսական առաջին հեղափոխության հետ հայ մտավորականության ունեցած առնչությունների վերլուծությունը։ Հեղինակները քննելով ժամանակի հայ գրականության և հրապարակախոսական մտքի արժեքները՝ ընդհանրացնող հետևյալ միտքն են հայտնում. «Բարձրարժեք ստեղծագործություններով, հասարակական-լրագրական գործունեությամբ ստեղծվել-հյուսվել է հեղափոխության ազատասիրական մի տարեգրություն, առանց որի անհնար է գծագրել XX դ. առաջին տասնամյակների հայ հասարակական մտքի ու գրականության

դիմապատկերը, ապրած տրամադրությունների վերելքը և ապա նահանջը, որոշ դեպքերում հուսախաբությունը հեղափոխության պարտությունից հետո՝ պատճառ-հետևանքային բարդ հանգույցներով» (էջ 34)։ Ա. Զաքարյանը և Գ. Հովհաննիսյանն այնուհետև ներկայացնում են հայ լուսավորական հրապարակախոսության ստեղծման, հայկական մեծ եղեռնին նվիրված հրապարակախոսության հարուստ էջերը, և իբրև ամփոփում ու հանրագումար՝ հայ դեմոկրատական հրապարակախոսության անցած ճանապարհի, վեր են հանում Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմական նշանակությունը, որով իրականանում էին ոսկեդարյան պետականություն ստեղծելու և խաղաղ կյանքով ապրելու հայ ժողովրդի և նրա մտավորականության դարավոր իղձերը։

Գրախոսվող ժողովածուն ունի ծանոթագրությունների բաժին, որտեղ հեղինակները հարուստ տեղեկություններ են հաղորդում տպագրվող հոդվածների վերաբերյալ։ Այդ բաժնում նրանք զետեղել են նաև առանձին արժեքավոր մեջբերումներ, որոնք է՛լ ավելի են ամրողջացնում ներկայացվող հատվածների մտքերն ու հետևությունները։ Օրինակ՝ Արվիսարյանի հոդվածից բերված քաղվածքը (էջ 529—530), Լինչի «Արմենիա» գրքից բերված հատվածները (էջ 533—534), Ժան Ժորեսի մտքերը հայկական կոտորածների մասին (էջ 535), Անատոլ Ֆրանսի ճառը (էջ 541—542), Վ. Թեքեյանի նամակը Լոզանի կոնֆերանսի մասին (էջ 552) և այլն։

«Ազատասիրական դաղափարները հայ հրապարակախոսության մեջ» ժողովածուում զետեղված հոդվածները թե՛ ժանրային և թե՛ թեմատիկ առումով լայն սահմաններ են ընդգրկում։ Եվ դա հասկանալի է։ Հայտնի է, որ XIX դ. մեր ժողովրդի նոր պատմության այն կարևորագույն ժամանակաշրջանն է, որի սկիզբը կապվում է Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանի հետ միավորվելու քաղաքական բախտորոշ իրադարձության հետ։ Դրան հաջորդում են հայ լուսավորական շարժման հետ կապված հասարակական-քաղաքական մտքի զարթոնքը, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության զարգացումը, հայկական կոտորածների հետ կապված անցքերը։ Պատմական այդ ժամանակաշրջանն աչքի է ընկնում նաև հայ մարքսիստական հրապարակախոսության սկզբնավորումով, մի բան, որ մեծ դեր է կատարում հայ հեղափոխական գործիչների նոր սերնդի դաստիարակության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման գործում։ Այս պարագաներում, իհարկե, ժողովածուի համար ընտրված բոլոր նյութերը չէ, որ կարող էին պատասխանել «զտարյուն» հրապարակախոսական ժանրի պահանջներին։ Դրանց ոգին և նպատակամղումը, սակայն, կապվում են հեղինակների ապրած դարաշրջանի կենսական հարցերի, պատմական ծանրակշիռ իրադարձությունների հետ և անպայման հրապարակախոսական մեծ լիցք են պարունակում իրենց մեջ։ Այսպես, «Հուշիկք հայրենեաց հայոց» գրքի «Առ Հայկակ» առաջաբանում ժամանակի սերնդին ուղղված Ալիշանի խոսքը կենդանի կոչ է՝ հայրենի երկրի փառքը բազմապատկելու ուղղությամբ և իբրև այդպիսին՝ հրապարակախոսական խոսքի անկրկնելի օրինակ։ Ստեփանոս Նազարյանի «Նամականիից» քաղված օրինակները նոր են դրվում շրջանառության մեջ և շատ կարևոր են՝ Նազարյանի աշխարհայացքի բացահայտման առումով։ Նրա հրապարակախոսական հոդվածներում, թերևս գրաքննական նկատառումներով, այդպիսի հստակությամբ, ինչպես հիշյալ նամակներում, չեն արտահայտվել Նազարյանի հայացքները արևմտահայության ազատագրման մասին։ Բայց ահա բերված հատվածներից երևում է մեծ լուսավորչի մտահոգությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո արևմտահայության ճակատագրի նկատմամբ, մեծ կշիռ են ստանում եվրոպական դիվանագիտությանը նրա տված գնահատականը և որ ամենագլխավորն է՝ մեր ժողովրդի ազատագրման գործում զինված պայքարի անհրաժեշտության մասին նրա հայտնած մտքերը։

Ժողովածուն կազմելու սկզբունքների հարցում մեր միակ դիտողությունն այն է թերևս, որ որոշ հատվածներ ներկայացված են այնքան կրճատված, որ դրանց տպագրությունն անիմաստ է դարձել։ Բարեբախտաբար, նման հատվածների թիվը փոքր է (էջ 77, 103, 107)։ Կան նաև, դարձյալ թվով քիչ, որոշ ոչ նպատակաուղղ էջեր, որոնք կարելի էր չզետեղել ժողովածուում։ Կարծում ենք լավ կլիներ, եթե ծանոթագրությունների բաժնում շատ հակիրճ ցույց տրվեր համապատասխան հոդվածի (ակնարկի, նամակի) գրության կոնկրետ շարժառիթը։

«Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ» ժողովածուն հստակ պատկերացում է տալիս քննության ենթակա ժամանակաշրջանի բախտորոշ էտապներում հայ ժողովրդի հրապարակախոսական մտքի ազատասիրական ուղղվածության մասին։ Այն մեկ անգամ ևս ապացուցում է, որ հայ հրապարակախոսությունն անվերապահորեն առաջադիմական էր,

ազատասիրական, սերտորեն շաղկապված ժամանակի ռուսական հեղափոխական շարժումների և դրանց դաղափարախոսության հետ։ Թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գործիչների հոդվածներից բերված օրինակներն ամրողջապես հաստատում են գրքի հեղինակների կուռ ու հիմնավոր մի շարք հետևություններ, այդ թվում և այն, որ «ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայոց գրականությունը ու հրապարակախոսությունը մշտապես եղել են հարազատ ժողովրդի արժանապատվության չափանիշը» (էջ 13)։ Եվ իսկապես, մեր այսօրվա և ապագայի սերունդները կարող են հպարտանալ հայ խոշոր գործիչների և մտածողների հայրենասիրական ոգեշունչ հոդվածներով, որոնց հետ, միմյանց հարևանությամբ, նորից ծանոթանալու պատեհություն են ստեղծում գրականագետներ Ա. Ջաքարյանը և Գ. Հովհաննիսյանը։

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու